

**Ապացուցման կանոններին և ապացուցման ոլորտում պաշտպանական կողմի  
իրավունքներին նվիրված փորձագիտական սեմինար**  
19 մարտի, 2013 թ., Երևան, Հայաստան

**Հիմնական եզրահանգումները**

2013 թվականի մարտի 19-ին Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի Իրավունքի գերակայության բաժինը (ԺՀՄԻԳ-ի ԻԳԲ), ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համագործակցությամբ, Երևանի «Մարիոթ» հյուրանոցում կազմակերպեց Ապացուցման կանոններին և ապացուցման ոլորտում պաշտպանական կողմի իրավունքներին նվիրված փորձագիտական սեմինար: Փորձագիտական սեմինարին մասնակցեցին քրեական դատավարության նոր օրենսգիրքը մշակող աշխատանքային խմբի անդամները, ԺՀՄԻԳ-ի արտերկրյա փորձագետները, ԱՄՆ-ից իրավունքի պրոֆեսոր Ստեֆեն Թեյմանը և ֆրանսիացի դատախազ Ժան-Քրիստոֆ Մյուլերը, ինչպես նաև՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներկայացուցիչներ: Քննարկումներն անդրադարձան ԺՀՄԻԳ-ի կողմից 2010 թվականին իրականացված՝ Հայաստանում դատավարությունների մոնիթորինգի ծրագրի (2008 թ. ապրիլից մինչև 2009 թ. հուլիս) վերջնական զեկույցում ներկայացված առաջարկություններին վերաբերող թեմաների:

Մասնակիցները քննարկման շրջանակում ընդգծեցին հետևյալ հանգամանքները.

*1-ին նիստ. Դեպոնացման ընթացակարգը և բացակայող վկաների ցուցմունքը*

1. Դրական քայլ է այն, որ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում նախատեսվել է դեպոնացման ընթացակարգ բացակայող վկաների համար, ովքեր հարգելի պատճառով ի վիճակի չեն լինի մասնակցելու դատական քննությանը: Դեպոնացման ընթացակարգի նախատեսումն ամբաստանյալի համար լրացուցիչ գործիք է՝ դատական քննությունից առաջ ցուցմունքի ամրագրումն ապահովելու համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ ամբաստանյալների ցուցմունքը միշտ ուսումնասիրվելու է հիմնական դատական քննության ժամանակ, սեմինարի մասնակիցներից ոմանք կասկածի տակ առան դեպոնացման ընթացակարգը նաև նրանց նկատմամբ տարածելու օգտակարությունը:
2. Չնայած որ բացակայող վկայի ցուցմունքը որոշ պայմաններում կարող է ընթերցվել դատարանում, ներդրվել է երաշխիք, որի նպատակն է բացառել մեղադրական դատավճռի կայացումը բացառապես այն վկայի ցուցմունքի հիման վրա, ով չի ենթարկվել խաչաձև հարցաքննության (ՔԴՕ-ի նախագծի

22-րդ հոդվածի 7-րդ մաս<sup>1</sup>): Դա փոխզիջումային լուծում է, որն անհրաժեշտ է խստագույնս կիրառել՝ վկաներին առերես հարցաքննելու իրավունքը երաշխավորելու համար:

3. ՔԴՕ-ի նախագծի համաձայն, իրավասու մարմինների ձեռք բերած ապացույցները, ներառյալ՝ ոստիկանության արձանագրությունները, կարող են ուսումնասիրության ենթարկվել դատական քննության ժամանակ՝ ցանկացած այլ ապացույցի նման, և ոստիկանության արձանագրությունների հեղինակներից կարող է պահանջվել ցուցմունք տալ դատարանում: Ոստիկաններին ցուցմունք տալու համար դատարան կանչելու իրավունքը համարվում է կարևոր նորամուծություն, և պաշտպանական կողմին անհրաժեշտ է օգտվել դրանից:

*2-րդ նիստ. Վկաներին դատակոչի ենթարկելու և ապացույցներ ներկայացնելու՝ պաշտպանական կողմի իրավունքները*

4. Մեմինարի մասնակիցները դրական գնահատեցին ՔԴՕ-ի նախագծի մի շարք դրույթներ, որոնցով նախատեսվող դատավարական երաշխիքները գերազանցում են միջազգային չափանիշները պաշտպանական կողմի իրավունքների պաշտպանության առումով. մասնավորապես, դա վերաբերում է ՔԴՕ-ի նախագծի 47-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն ամբաստանյալը կարող է հրաժարվել պաշտպան ունենալու իրավունքից միայն վերջինիս ներկայությամբ:
5. Դատարանում վկաների խաչաձև հարցաքննության իրավունքը և մեղադրողի, և պաշտպանական կողմի համար նախատեսված առաջադիմական քայլ է, որն էլ ավելի է ամրապնդում զենքերի հավասարության սկզբունքը:
6. Հաշվի առնելով ՔԴՕ-ի նախագծի 336-րդ հոդվածով նախատեսված՝ նախկինում տված ցուցմունքների բացահայտման և թույլատրելիության առնչությամբ որոշ մասնակիցների արտահայտած մտահոգությունը/անորոշությունը, առաջարկվեց լրացուցիչ քննարկման համար Աշխատանքային խմբին ներկայացնել վերոհիշյալ դրույթի այլընտրանքային ձևակերպումներ կամ լուծումներ:

*3-րդ նիստ. Ապացուցման չափանիշները*

7. Մասնակիցներն ընդհանուր առմամբ համակարծիք էին և ողջունեցին այն փաստը, որ ՔԴՕ-ի նախագծով ապացույցների թույլատրելիության վերաբերյալ նախատեսվող իրավանորմերը որոշ դեպքերում պարունակում են իրավական լուծումներ, որոնք գերազանցում են միջազգային ստանդարտները:
8. Շեշտադրվեց, որ օրենքով և Սահմանադրությամբ պաշտպանվող իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցները պետք է բացառվել

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության ՔԴՕ-ի նախագծի վերաբերյալ արված հղումները վերաբերում են ՔԴՕ-ի նախագծի՝ 2013 թվականի մարտի 1-ի դրությամբ առկա տարբերակին:

վարույթից՝ ապացույցների թույլատրելիության և բացառման չափանիշներին համահունչ:

9. Կարևորվեց այն հանգամանքը, որ պղտորված ապացույցների բացառումը կամ այսպես կոչված «թունավոր ծառի պտղի հայեցակարգը նախատեսվել է ՔԴՕ-ի նախագծի 97-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն օրենքի էական խախտմամբ ձեռք բերված տվյալները, ինչպես նաև՝ այդ տվյալների հիման վրա կատարված դատավարական գործողությունների հիման վրա ձեռք բերված տվյալներն անթույլատրելի են և չեն կարող օգտագործվել որպես ապացույց: Միջազգայնորեն ճանաչված կամ այլ պետությունների ձևավորված գործող չափանիշների հիման վրա կարելի է առավել լիարժեքորեն կողմնորոշվել այն հարցում, թե ինչպես պետք է գործնականում կիրառել անթույլատրելիության այս կանոնը:

Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության բարեփոխումներին լրացուցիչ օժանդակություն ցուցաբերելու նպատակով ԺՀՄԻԳ-ի ԻԳԲ-ն հանձն առավ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դիմումի հիման վրա մանրակրկիտ մեկնաբանություններ ներկայացնել քրեական դատավարության օրենսգրքի նախագծի տեքստի վերաբերյալ՝ առաջիկայում ներկայացնելով իրավաբանական փորձագիտական կարծիք օրենսգրքի նախագծի վերաբերյալ: